
**ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՄԱՆՇԱՅԻՆ ՇԱՐՔԵՐԻ
ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՔՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ**

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ն. Գ.

Լեզվի զարգացմանը զուգընթաց անխուսափելիորեն փոփոխվում են հոմանշային շարքերը հին ու նոր բառերի աստիճանական դուրս մղումով և ներթափանցմամբ, բառիմաստային փոփոխությունների հետևանքով: Պատմականորեն փոփոխվող այդ շարքերը, անշուշտ, հետաքրքիր են, ուստի, հետևելով Գ. Ջահուկյանի՝ հին հայերենի հուշարձաններից առանձնացրած հոմանշային շարքերին¹ և «Հանդես բանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս...» խորագրով XII-XVII դդ. վկայված ձեռագիր բառարաններին, փորձ է արվում հնարավորին չափ վեր հանել հայերենի հին և միջին շրջանների հոմանշային շարքերի առանձնահատկությունները՝ համադրելով նաև Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանում» արձանագրվածները²: Ինչ խոսք, ընտրված ժամանակաշրջանը բավական ընդգրկուն է. այդուհանդերձ, որոշ եզրակացությունների կարելի է հանգել առավելապես բառիմաստային փոփոխությունների³ և գրաբարի բառարաններում⁴ չարձանագրված բառերը տարբերակելու առումներով:

Համեմատությունն ավելի որոշակիացնելու նպատակով առաջին հերթին զուգադրվել են միևնույն հենաբառն ունեցող հոմանշային շարքերը⁵:

Անջատել - անջրպետեմ-աւծտեմ (աւցտեմ)-բաժանեմ-զատեմ-որոշեմ-տրոհեմ-քակեմ-քեցեմ (391):

Անջատել. որոշել. տարամերժել. քեցել. տրոհել. զատել. հերքել. տարբերել. տրամատել. պեղել. քակել. մեկնել. հոշկացանել. բաժանել. մեկուսել. ի կողմ հանել.

¹ **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 390-408:

² **Սուքիասյան Ա.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան (այսուհետև՝ ՀԼՀԲ), Ե., 1967:

³ Բառիմաստի փոփոխություն կամ բառի իմաստային նոր նրբերանգ ձեռք բերելն արձանագրվում է գրաբարի, միջին և արդի հայերենի բառարանների համեմատությամբ, քանի որ ձեռագիր բառարանները բնագրային օրինակներ չունեն:

⁴ Խոսքը վերաբերում է «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (այսուհետև՝ ՆՀԲ, հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837), «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի» (այսուհետև՝ ԱԲ, Վենետիկ, 1865), «Նոր բառգիրք հայկազեան լեզուի. սրբագրուած և ճոխացուած Ն. Բիւզանդացու ձեռքով» (հ. 1-5, Ժնև, 1990) բառարաններին. համեմատվել է նաև Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարան»-ը (հ. Ա, Բ, Ե., 2000):

⁵ Սկզբում տրվում է Գ. Ջահուկյանի առանձնացրած, այնուհետև ձեռագիր բառարանների, վերջում ՀԼՀԲ հոմանշային շարքը. փակագծերում նշվում են էջերը:

ցանկել. յրաժարել. քակտել. քեր(ք)ել*. մղել. մզել. Աւուրցել*. հանել. ի բաց առաքել⁶:

Անջատել. զատել. ջոկել. առանձնացնել. բաժանել. տարոտրոշել. (հզվդ.) արտազատել. տարանջատել. քեցել (հնգ.): Մեկուսացնել, հեռացնել (65):

Որոշակիորեն հոմանշային շարքերից ընդարձակը ձեռագիր բառարաններինն է, որ պայմանավորված է միջինհայերենյան քերականների՝ հոմանիշի ըմբռնումով և ձեռագիր բառարանների հոմանշային շարքի կազմության սկզբունքով⁷: Առաջին երկու շարքերի համեմատությամբ առանձնանում է հոմանիշ բառերի այն կորիզը, որը, բնականաբար, արտացոլվել է ՀԼՀԲ-ում:

Թեև **անջրպետել** բայն արձանագրված չէ ձեռագիր բառարաններում, սակայն բառարանային տվյալներով նշված իմաստով հանդիպում է միջնադարյան գրականության էջերում (ՆՀԲ, 1, 233):

Ինչ վերաբերում է գրաբարի բառարաններում որոշակիորեն «անջատել, որոշել, բաժանել, զատել, տրոհել» իմաստները չունեցող բայերին, ապա դրանցից **պեղելը**, («փորել, հանել» ՆՀԲ, 2, 645), **հերքելը** («ի բաց մերժել» ՆՀԲ, 1, 95), **մզելը** («զտել» ՆՀԲ, 2, 258), **մղելը** («վանել» ՆՀԲ, 2, 1003), **ցանկելը** («պարսպել» ՆՀԲ, 2, 909), **քերելը** («ի բաց առնել, հեռացուցանել» ՆՀԲ, 2, 1003) իմաստային միանգամայն ընդունելի զարգացումներով ձեռագիր բառարաններում ունեն վերը նշված իմաստները փոխաբերորեն. փորել–հանելիս առանձնացնում, անջատում են, մերժել–վանելը նույնպես տարոտրոշել, զատել է նշանակում, մզել–զտելը որոշակիորեն պարունակում է «առանձնացնել» իմաստը (հմմտ. բայի՝ ժամանակակից հայերենում արձանագրված «ջոկել, առանձնացնել» իմաստը)⁸, ցանկելը՝ նույնպես⁹: **Քերելը**-ը (հայ. նաև **քերթել**, **քերծել**, **քորել**) ստուգաբանորեն առնչվում է հ.-ե. *(s)ker- «կտրել» արմատին¹⁰ (կտրելն ինքնին ենթադրում է անջատել, բաժանել): Ուստի և նշված արմատի մի քանի «ժառանգ ձևերի»՝ «անջատել, բաժանել, կտրել» իմաստների առկայությունը¹¹ թույլ է տալիս ենթադրելու այս նրբերանգը միջինհայերենյան ձեռագիր բառարաններում՝ նկատի առնելով նաև

⁶ Ձեռագիր բառարաններում հանդիպում են **քերքել** և **քերել** բայերը. ՆՀԲ-ն **քերքել**-ը մեկնում է «Հերքել և Քեցել. ի բաց հանել» (ՆՀԲ, 2, 1005): **Քերել**-ու մասին՝ ստորև: **Աւուրցել**-ը ՆՀԲ-ն նշում է **Աւուրց ելանել** (ՆՀԲ, 1, 397):

⁷ Հոմանշային շարքը ներկայացնելիս որևէ ձեռագիր հիմք չի ընդունվել: Դրանք քաղվել են XII-XVII դդ. վկայված 65 ձեռագրերի համեմատությամբ:

⁸ Տե՛ս **Հովհաննիսյան Ն.**, Հոմանշային շարքը միջինհայերենյան ձեռագիր բառարաններում, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 2001, № 2, էջ 200-203:

⁹ **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 382:

¹⁰ Մանրամասն տե՛ս **Հովհաննիսյան Ն.**, Բառիմաստային նրբերանգներ հոմանիշների միջինհայերենյան ձեռագիր բառարաններում, ՊԲՀ, 2003, № 2, էջ 254-255:

¹¹ **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 52, 607:

¹² **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 4, Ե., 1979, էջ 571:

ժամանակակից հայերենում **քերել**-ի «Սուր գործիքը առարկայի մակերևույթին քսելով՝ նրանից մասնիկներ հեռացնել» (հմմտ. նաև **քերիչ** «գործիք») իմաստը¹²:

Արքանեակ– ծառայ–սպասաւոր (392):

Արքանեակ. սպասաւոր. պաշտօնեայ. հիւպերէտ:

Արքանյակ... 3. Տե՛ս Սպասավոր (92): Սպասավոր. պաշտոնակատար. ծառա. արքանյակ. պաշտակ. ոտնկա. սպասյակ... (հնգ.)... հյուպերէտ... (584):

Հարկ է նշել, որ ձեռագիր բառարաններում առկա է նաև **Հնազանդ** հենա բառով հոմանշային շարք՝ Հնազանդ. ծառայ. հաւան. հյու. պաշտաւնեայ. սպասաւոր. հպատակ. արքանեակ. ընդ ձեռամբ. նուաճեալ. պաշտակ, որը հուշում է ենթադրելի «հպատակը, ստրուկը, գերին», մինչդեռ վերը նշված **արքանեակ**-ը վերաբերում է «արքունի սպասավոր, պաշտոնյա»-ին (հմմտ. հունարենից փոխառյալ հիւպերէտ բառը՝ «պաշտօնեայ, փոքրաւոր», ՆՀԲ, 2, 102):

Միաժամանակ հարկ է թերևս մեկ անգամ ևս արձանագրել, որ **պաշտել**-ից ծագող **պաշտոնյա**-ն նախապես ունեցել է «ծառա, սպասավոր» իմաստը: Հ. Աճառյանի հավաստմամբ իրան. **parišta** «պաշտամունք, երկրպագութիւն» ձևը «բուն նշանակում է շուրջ կանգնիլ» (ՀԱԲ, 4, 23-24): Այնպես որ սկզբնական «պաշտող, երկրպագող, շուրջը պտտվող», ասել է՝ «ծառայող, սպասավորող, սպասարկող» իմաստից ժամանակակից հայերենում անցում է կատարվել «պաշտոնատար անձի» (ԱՀԲԲ, 1191), որին էլ հենց ծառայում, սպասարկում են, ում շուրջն էլ արդեն պտտվում են: Թեև ըստ ՀԱԲ-ի՝ դեռևս Հ. Ոսկերեքանն ունի **պաշտօնուկ** բառը «շողոքորթութիւն» իմաստով (ՀԱԲ, ն. տ.):

Դիտեմ–գննեմ–հայիմ–նայիմ (396):

Դիտել. նկատել. հայել:

Դիտել. 1. նայել. հայել. աչել. սևեռել... նկատել, նշմարել... 2. Տե՛ս Ջննել (171):

Ձեռագիր բառարանների հոմանշային շարքում չարտացոլված **զննել** և **նայել** բայերը հանդիպում են բառարանի մեկ այլ հոմանշային շարքում՝ Հայցել.(յ)այցել.յուզել. զննել. յայտնել. թելադրել.խնդրել. քննել. յղկել. զգրել*. պատկառել. պահանջել. փորձել. հարցափորձել. որոնել. բռնադատել. Հետազատել. կրկտել. գտանել. յեղել. խուզել. հարկաւորել. չափել. մանրախուզել. թախանձել. մտախոհ լինել. ՚ի վերայ հասանել. տապալել. հոլովել. տեղեկանալ. յառել. կարկառել. նայել, որից էլ պարզորոշ է **զննել–նայել**-ու «հետազոտել, որոնել, ստուգել» նրբերանգր. ի դեպ, Մխ. Մեբաստացին **զննել**-ը բացատրում է հենց «Քննել, կամ որոնել, կամ խնդրել, կամ հետազոտել»¹³:

¹² Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. 4, Ե., 1980, էջ 730, ԱՀԲԲ, 1505:

* **Գզրել**-ու մասին տե՛ս *Հովհաննիսյան Ն.*, Նորակազմ բառեր հոմանիշների միջին-հայերենյան ձեռագիր բառարաններում (ՊԲՀ, 2002, №1, էջ 176):

¹³ *Մեբաստացի Մխ.*, Բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1769, էջ 281:

Ինչ վերաբերում է **սևեռել** բային, ձեռագիր բառարաններում այն առկա է Մա-
ծեալ. մակադրեալ. սևեռեալ. բևեռեալ հոմանշային շարքում՝ «ամրացնել, պնդաց-
նել» իմաստով, որը տարբերվում է արդի հայերենում արձանագրված «հայացքը
կամ ուշադրությունը հատել մի բանի» իմաստից (բառարանները նշում են նաև
«սևեռել, գամել» իմաստը, մեկը՝ «հնց.» նշումով (ԺՀԼԲԲ, 4, 292), մյուսը՝ առանց
նշումի (ԱՀԲԲ, 1295): Ակնհայտորեն արդի հայերենում առկա է իմաստի
տարբերակում:

Ձղջ(ան)ալ–ապաշաւիմ–ապաշխարեմ–ստրջանամ (-փաշաման) (397):

Ձղջանալ. ստրջանալ. ապաշխարել. ապաշաւել:

Ձղջալ. զղջանալ, ափսոսալ. փռշմանել. ցավել. զղջահարվել. մեղա գալ. (հնց.)
ապաշաւել, ստրջանալ, ստրջալ, ապաշխարել, աշխարել... (200):

Հին և միջին հայերենի հոմանշային շարքերի միակ տարբերությունը
փաշաման-ն է, որը թեև **փռշիման**, **փռշաման** (այլև փռշմանել, փռշիմանիլ,
փռշմընիլ, փռշմնիլ) ձևերով նշվում է Միջին հայերենի բառարանում¹⁴, սակայն չի
հանդիպում ձեռագիր բառարաններում:

Ցավել-ը բացակայում է առաջին երկու շարքերում: Գրաբարի բառարանային
տվյալներով¹⁵ **ցավել**-ի՝ արդի հայերենում «զղջալ, ափսոսալ, փռշմանել» իմաստը
(ԱՀԲԲ, 1472, ԺՀԼԲԲ, 4, 551) հետագա՝ ավելի ուշ ժամանակաշրջանի պետք է
վերագրել՝ ընդունելի ցավել(վշտանալ(ափսոսալ իմաստային անցումով):

Ժառանգ. պայազատ (398):

Ժառանգ. յետմնաց:

Ժառանգ. ժառանգորդ, ժառանգակալ, (հնց.) ժառանգավոր, ժառանգընկալ,
ժառանգիլ, պայազատ... (231):

Բառերի կոպիտ այբբենական դասավորություն ունեցող XIV դ. ձեռագիր
բառարաններում հանդիպող **յետմնաց**-ը (թիվ 4149, 355բ, 8198, 65բ), ըստ ՄՀԲ-ի,
գործածվում է Սմբատ Սպարապետի դատաստանագրքում, այլև XIII–XVIII դդ.
Մանր ժամանակագրություններում (ՄՀԲ, 2, 169. հմմտ. նաև ՆՀԲ, 2, 356, ԱԲ, 592):
Ելնելով բառարանների բնագրային օրինակներից՝ կարելի է ենթադրել, որ
յետմնաց (յետամընաց)-ը ստեղծվել և ոչ երկարատև գործածվել է նշված ժամա-
նակաշրջանում առավելապես իրավահարաբերություններ կարգավորող գրագրու-
թյուններում:

Բառը ժամանակակից հայերենում ձեռք է բերել բոլորովին այլ իմաստներ՝
«հետադեմ (չառաջադիմող). հետ մնացած(ող). ուշացող» (ԺՀԼԲԲ, 3, 342, ԱՀԲԲ,
862):

¹⁴ **Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ.**, Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ), հ. 2, Ե.,
1992, էջ 421, 426:

¹⁵ ՆՀԲ-ն մեկնում է իբր «Ցաւագնիլ, ախտանալ, վշտանալ, սգալ...» (ՆՀԲ, 2, 912), ԱԲ-ն՝
«Ցաւիլ, ցաւ քաշիլ, կսկծալ» (ԱԲ, 798): Հմմտ. նաև **Ղազարյան Ռ.**, Գրաբարի բառարան, հ. Բ, Ե., էջ
581:

Կապարձ–պատկանդարան (400):

Կապարձ. փառանգաւոր. աղեղ(ն)ա(ն,նց)բոյն. աղեղ(ն)աման. նետաման. նետբոյն:

Կապարձ. (պատմ.) նետաման, պատկանդարան, (հնց.) քեշ. թարքաշ, փառանգավոր (306):

Ձեռագիր բառարանների հոմանշային շարքի բառերից (բացառյալ հենաբառը) միայն **աղեղնաբոյն**-ն է **աղեղնաբուն** ձևով արձանագրված ԱԲ-ում (ԱԲ, 16):

Փառանգաւորը, նետամանը, աղեղնամանը, նետբոյնը չկան գրաբարի և միջին հայերենի բառարաններում: Առաջինն արձանագրել են միայն Ստ. Մալխասյանցը «հզվդ.» նշումով¹⁶ և ՀԱԲ-ը՝ հղելով Եր. Մեղրեցու բառգրքին (ՀԱԲ, 4, 483), թեև Հ. Ամալյանի կազմած քննական բնագրում¹⁷ այն չկա: Եվ եթե պարզորոշ է **աղեղ(ն)աման, նետաման, նետբոյն** բառերի կազմությունը՝ աղեղ, նետ և աման, բոյն արմատների կցումով, ապա նույնը չի կարելի ասել **փառանգաւոր**-ի մասին: **Փառանգը** հիշեցնում է, թերևս, **փաղանգը**, թեև *ղ/ռ* բաղաձայնական հերթազայությանը տարբերակներ հայերենում չեն արձանագրված: Այն կարելի է նաև սխալագրություն դիտել՝ *ղ* տառի մասնիկի կարճ գրությամբ: Եվ եթե ընդունելի է դա, ապա ենթադրելի է հունարեն **փաղանգը**՝ «ճյուղերից մաքրված բուն, ցողուն, կոթ, գերան...»¹⁸ առաջնային իմաստով, որ նմանությամբ կարող էր *նետ* կոչվել: Հարկ է նաև հիշեցնել արտալեզվական մի փաստ. մակեդոնացիների՝ հույների ստեղծած փաղանգ-գորագունդը առավել կատարելագործելուց հետո էլ դրա հիմնական սպառազինությունը տեղերն ու նետերն էին¹⁹: Եվ **փաղանգ**-ին կցված «ունեցողի» բառակազմական իմաստով **(-ա)վոր** ածանցով արդյոք **փաղանգավորը** նույն նետ(եր) ունեցողը չէ. հմմտ. ինչպես՝ զինվոր, ազևոր, նետաւոր (ՄՀԲ, 2, 190), այլև աշտարակավոր, բժավոր, գունավոր: Ուստի և **փաղանգավոր**-ը կարող էր նշանակել նաև նետեր ունեցող, նետերով լցված, տվյալ դեպքում՝ նետաման, կապարձ:

Ցուպ -քուք-գաւազան-մական (ուշ) * :

Ցուպ. գաւազան. մական. հաստոց. բիր:

Ցուպ. մահակ. գավազան, անթացույ(ձեռքի). (հզվդ.) փակ. սկյուտաղ. ճական. մական (իշխանություն)... (640)²⁰:

¹⁶ **Մալխասեանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՄՀԲԲ), հ. 4, Ե, 1945, էջ 488:

¹⁷ **Մեղրեցի Եր.**, Բառգիրք Հայոց (այսուհետև՝ Բառ. երեմ.), Ե., 1975 :

¹⁸ *Древнегреческо-русский словарь, т. 2, М., 1958, с. 1742:*

¹⁹ Մանրամասն տե՛ս **Шахермайтр Ф., Александр Македонский, М., 1984, с. 84-85, 297:**

* Գ. Ջահուկյանն առանձնացնում է նաև Բիր-ձաղկ-ջին-գաւազան-մահակ-ջալոտ(ի) հոմանշային շարքը. տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 393:

²⁰ **Գաւազան** և **մահակ** բառերն առկա են նաև **Բիր** հենաբառով հոմանշային շարքում.

Քուր-ը ձեռագիր բառարաններում հանդիպում է *քքել ձեռով Լուտալ* հենաբառով հոմանշային շարքում և առանձնանում «վնասել, վիրավորել» իմաստային նրբերանգով²¹:

ՆՀԲ-ում XIII-XIVդդ. վկայված **հաստոց**-ը «Հաստարան. պատուար. Անջրպետ» (ՆՀԲ, 2, 56)²² ՄՀԲ-ում ունի միայն «հենարան, նեցուկ» իմաստը (ՄՀԲ, 2, 22): Այնպես որ ընդունելի է միջին հայերենում նաև **գաւազան, ցուպ**-ի՝ «նեցուկ, պաշտպանություն» փոխաբերական իմաստով գործածությունը:

Արդի հայերենում **հաստոց**-ը բացարձակապես այլ իմաստ է ձեռք բերել՝ «մետաղի, փայտի և այլն մշակման մեքենա, հարմարանք, դազգահ» (ԺՀԼԲԲ, 3, 307, ԱՀԲԲ, 831)²³:

Հատկանշական է, որ տարբեր հենաբառերով հոմանշային շարքերին հետևելիս պարզվում է, որ ձեռագիր բառարանների հենաբառը մեծ մասամբ մյուս երկու շարքերում առկա որևէ բառ է, և միայն մի քանի դեպքում է գործածվում նոր (մյուս երկու շարքերում չհանդիպող) բառ: Այդպիսի բացառություններից է ստորև ներկայացվող եռաշարքը:

Ամփոփ-կարճ (առաւտ)-հակիրճ-համառաւտ (391):

Հատու. կարճավճիռ. հակիրճ. համառաւտ:

Ամփոփ. սեղմ, հակիրճ, կարճառոտ, համառոտ, կարճամփոփ, կարճ (32):

Հատու-ն գրաբարում ունի «Քաջ հատանօղ. հատիչ. սուր. և Մաստիկ. Կըտ-րուկ» իմաստները (ՆՀԲ, 2 58, ԱԲ, 80): Ուշագրավ է, որ **կտրուկ**-ը արձանագրված չէ գրաբարի բառարաններում: Հ. Աճառյանն այն «նոր բառ» է դիտում (ՀԱԲ, 2, 643), Ստ. Մալխասյանցը՝ առանձնացնում «գաւառական բառ կամ նշանակութիւն» նշումով (ՄՀԲԲ, 2, 500)՝ իմաստների շարքում թվարկելով նաև «կտրական, կարճ, վճռական»-ը:

Եթե նկատի առնենք, որ **կտրուկ, վճռական**-ը բնականաբար լինում է **կարճ**²⁴, նաև արդի հայերենի բացատրական բառարանների նշած **հատու**-ի փոխաբերական «կտրուկ, վճռական» իմաստները (ԱՀԲԲ, 840, ԺՀԼԲԲ, 2, 216), կարելի է հավանական համարել միջինհայերենյան **հատու**-ի «կարճ, հակիրճ, համառոտ» իմաստը:

Առանձին-բաժան-ի բաց-գատ-յատուկ-ուրոյն(-հեռի. հմմտ. անջատեմ) (392):

²¹ Տե՛ս **Հովհաննիսյան Ն.**, Բառիմաստային նրբերանգներ..., էջ 252-253:

²² ԱԲ-ն մեկնում է «Պատով կամ վանդակով գատած միջոց, խտրոց» (ԱԲ, 479):

²³ Բառի՝ գրաբարի համեմատությամբ արդի հայերենում նոր իմաստներով գործածվելը նշել է նաև Ա. Սուքիասյանը. տե՛ս *Սուքիասյան Ա.*, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1971, էջ 177-178:

²⁴ Կարելի է համեմատել նաև **Կտրել**-ու (նույն՝ **կտտոր** արմատից. ՀԱԲ, 2, 641)՝ ժամանակակից հայերենում արձանագրված «դադարել, ընդհատել» իմաստները (ԱՀԲԲ, 770):

Ձատ. առանձին. յատուկ. միայն. իւրաքանչիւր. երկաքանչիւր. աստար. այլաձին. տրոհ. ուրիշ:

Առանձին... 2. Ձատ, անջատ, առանձին, ջոկ, բաժան, (հզվդ.) տարրորոշ, տարանջատ: 3. Ուրույն: 4. Հատուկ (78):

Հոմանշային շարքերը համեմատելիս առանձնացված (ասել է՝ հոմանշային մյուս շարքերում չարտացոլված) **միայն, իւրաքանչիւր, երկաքանչիւր, աստար, այլաձին, տրոհ, ուրիշ** բառերը բառարանային տվյալներով որոշակիորեն ունեցել են նաև «առանձին» իմաստը: Այսպես՝ **միայն** «միայնակ» (ՆՀԲ, 2, 268), «առանձին, մենակուկ» (ԱԲ, 562). **իւրաքանչիւր** «ամենայն ոք մի առ մի» (ՆՀԲ, 1, 875), «ամեն մեկը» (ԱԲ, 349). **երկաքանչիւր** «երկուսից ամեն մեկը» (ՆՀԲ, 1, 690), **աստար** «զատուցեալ, հեռի» (ՆՀԲ, 1, 1082), «ուրիշ, տարբեր» (ԱԲ, 845). **այլաձին** «այլաբան, բանը ուրիշ» (ՆՀԲ, 1, 85, ԱԲ, 54). **տրոհ** «բաժանումն» (ՆՀԲ, 2, 898, ԱԲ, 793). **ուրիշ** «ուրոյն, մեկուսի» (ՆՀԲ, 2, 560), «ուրիշ, զատ» (ԱԲ, 654): Դրանք իմաստային որոշ անցումներով պահպանվել են արդի հայերենում. բացառություն են **միայն**-ը, որի «մենակ, միայնակ, առանձին» իմաստը տրվում է «հնգ.» նշումով (ԱՀԲԲ, 1008), և **երկաքանչիւր**-ը, որը չկա արդի հայերենի բառարաններում:

Գաղտնի-թաքուն-սալար-զանխուլ-ծածուկ (394):

Զանխուլ. ծածուկ. անյայտ. առանց գիտելոյ. դաւադէտ. դարանամուտ. սքողեալ. խփեալ. ընդ գրուանաւ. ընդ պատրուակաւ. ընդ վարագուրաւ:

Գաղտնի. թաքուն, ծածուկ, գաղտուկ, գաղտնածածուկ, գաղտագողի, գողունի, (հնգ.) թաքթաքուր... (135):

Դարձյալ առանձնանում է ձեռագիր բառարանների հոմանշային շարքը²⁵:

Դարանամուտ (դարան մտած(ծածուկ), **անյայտ, առանց գիտելոյ** (ոչ հայտնի(ծածուկ)-ի իմաստային առնչությունն ակնհայտ է, իսկ **սքողեալ, խփեալ, ընդ գրուանաւ, ընդ պատրուակաւ, ընդ վարագուրաւ**-ի իմաստային անցումը՝ փոխաբերական. քողարկված, ծածկված, ծածկոցի, քողի, որևէ տարայի (ընդ գրուանաւ) տակ գտնվել-լինելը ենթադրում է գաղտնիություն, ծածուկ վիճակ (հմտ. նաև **տակով(ն) անել** դարձվածը)²⁶: Ի դեպ, հայ բարբառներում պահպանվել են **խփել**-ու «փակել, ծածկել, կողպել» իմաստները²⁷:

Փուռ-գել-թիւր-կեռ-կոր-շեղ-խոտոր-ծեք(-ծոխիմ)(400):

Առիշեղ*. խոտորնակ. կողմ(ա)նակի. ՚ի ձախ. գելակի:

Փուռ. կոր, ծուռումուռ, թեք, շեղ, առիշեղ, զարտուղի, խոտոր, (հզվդ.) գել, ձոխ, (բրբ.) ծուռտիկ... (293):

²⁵ Հոմանշային շարքի մասին տե՛ս **Հովհաննիսյան Ն.**, Նորակազմ բառեր..., էջ 179, **նույնի՝** Բառիմաստային նրբերանգներ..., էջ 257:

²⁶ **Սուքիասյան Ա., Գալստյան Ա.**, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975, էջ 585:

²⁷ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 2, Ե., 2002, 385:

* Ճիշտը՝ Առիշեղ (ՆՀԲ, 2, 474, ԱԲ, 634):

XII–XVII դդ. 65 ձեռագիր բառարաններում արձանագրված են *ի ձախ* և *ի ձոխ/դ* ձևերը, վերջինս՝ տասնվեցում միայն: XVIII դ. թիվ 566, 6762 ձեռագրերում առկա է միայն *ի ձախ*-ը *թեք* կամ *թեքել* հենաբառով հոմանշային շարքում: Այս պատճառով (միայն քանակական կողմը հաշվի առնելով) է ըստ հարկի քննվել միայն *ի ձախ*-ը²⁸, նկատի առնելով նաև, որ ձեռագիր բառարաններում ակնարկվում է «ուղուց շեղվել, խոտորվելը»։ հմմտ. *խոտորնակ* «խոտորեալ կամ շեղեալ յուղորութենէ» (ՆՀԲ, 1, 970), *կողմ(ա)նակի* ... «շեղեալ ՚ի մի կողմն» (ՆՀԲ, 1, 1112), ապա ԱԲ-ի մեկնած «անուղղակի» իմաստը (ԱԲ, 445):

Դառնալով *ի ձոխ/դ*-ին՝ հարկ է հավելել, որ բառարանները *ձոխիմ/լ*-ը բացատրում են իբրև «շեղիլ, խոտորիլ ՚ի ձախակողմն» (ՆՀԲ, 2, 160, ԱԲ, 521): Հ. Աճառյանը, հղելով Բառ. երեմ.-ին, տալիս է *ձոխել* («թիրել») և *ձախել* («ծռել») ձևերը (ՀԱԲ, 3, 157). *թիր-սխալ*-ը իմաստային անցումով նույն ոչ ճիշտ, անճիշտ, հետևաբար և *ծուռ, շեղ*-ն է:

Ինչ վերաբերում է *գելակի* բառին, ապա դրան՝ որպես ՆՀԲ-ում և ԱԲ-ում չարձանագրված բառ, անդրադարձել է Լ. Հովհաննիսյանը²⁹. Բառը ստու-գաբա-նորեն առնչվում է *գել* «ուլորած, պիրկ» արմատին:

Թերևս հարկ է հավելել միայն, որ Հ. Աճառյանի հավաստումով *գել* արմատը դրսևորվում է նաև այլ ձևերով, որոնցից *գիլ-ը գել* արմատի (հ.-ե. *wel- «զլորել» արմատից) ձայնդարձն է (ՀԱԲ, 1, 530, 555) : Ուստի և ընդունելի է ոչ միայն նշված ոլորված(ծուռ, այլև գլորված(թեք, շեղ (ոչ ուղիղ) իմաստային անցումը, հատկապես եթե համադրվի արդի հայերենի բացատրական բառարանների նշած *գլոր(վել)*-ու «կործանել, տապալել» փոխաբերական իմաստը (ԱՀԲԲ, 244, ԺՀԼԲԲ, 1, 412), որ նշանակում է, թե միջին հայերենում, թերևս, արդեն եղել է ուղուց շեղվելու՝ «կործանվելու» իմաստային նրբերանգր:

Հիծիմ-մաշիմ- ներգնիմ-ծիրիմ-ծնկ/զիմ-հաշիմ (402):

Ծիրեալ. ծմրեալ. ծնգ/կեալ. ճնշեալ. մաշեալ. հիծեալ. հաշեալ. քամեալ. նուաղ/զ (ել):

Հյուծվել. նիհարել, բարակել, տկարանալ, (հզվդ.) ծյուրվել, ծնգվել, ներգնել, նքողել, փածեղնոտել, տրփալ, (ժղվրդ.) հալվել, մաշվել, չմքել, հալումաշ լինել... (391):

Գ. Ջահուկյանի առանձնացրած հոմանշային շարքից *ներգնիմ*-ը և *հաշիմ*-ը՝ *ներգնիլ* և *հաշ* ձևերով, նույն իմաստներով վկայված XII–XIII դդ., տրված են ՄՀԲ-ում (ՄՀԲ, 2, 18, 192), այնուհանդերձ, *հաշիմ*-ը *հաշեալ* ձևով հանդիպում է միայն XVII դ. թիվ 2370 (293 ա) ձեռագրում: XVIII դ. թիվ 566, 6762 ձեռագրերում արդեն հիւծիլ. նուաղիլ. ծիրիլ. հաշիլ. պակասիլ. հալիլ. նուազիլ շարքի հենաբառ է ընտրված *Մաշիլ*-ը (թիվ 566, 259 բ, 6762, 117 ա)՝ ասես նախապատրաստելով

²⁸ Տե՛ս Հովհաննիսյան Ն., Հոմանշային շարքը..., էջ 202:

²⁹ Հովհաննիսյան Լ., Բառաքնական նկատառումներ (ՊԲՀ, 2003, №3, էջ 193):

անցումը հետագայում (կամ, թերևս, հենց այդ ժամանակաշրջանում) ժողովրդա-խոսակցականում լայնորեն կիրառվող *հալ(վ)ել-մաշ(վ)ել*-ուն³⁰:

Ճնշել-ը, ըստ գրաբարի բառարանների, «նեղը ձգել, չարչրկել», «ըստ ամենայն առման ճմլել»-ն է (ՆՀԲ, 2, 182, ԱԲ, 530): Այլ կերպ՝ ձեռագիր բառարանների հոմանշային շարքի կազմության սկզբունքով՝ նեղված, ճնշված, անհանգիստ վիճակը հյուծում, քամում, հալումաշ է անում, ասել է՝ այն, ինչ «փխբ.» նշումով արձանագրում են արդի հայերենի բացատրական բառարանները (ԱՀԲԲ, 945, ԺՀԼԲԲ, 3, 450):

Ձեռագիր բառարաններում հանդիպում է ևս երկու հավելում՝ *նուազ/դել* և *քամել* (թիվ 6097, 280բ, 9992, 3ա):

ՆՀԲ-ում նշված է հայ մատենագրության մեջ «ըստ ամենայն առման» գործածվող *նուազել/նուադել* բայերի առանձնահատկությունը (ՆՀԲ, 2, 449): Արդի բացատրական բառարաններում նույնպես առկա են դրանք՝ «տկարանալ, թուլանալ, ուժասպառ լինել» իմաստով (ԱՀԲԲ, 1086–1087, ԺՀԼԲԲ, 4, 49): ՄՀԲ-ն ունի միայն *նուազեցնել*՝ «նուազ՝ պակաս դարձնել, թուլացնել» (ՄՀԲ, 2, 197):

Հոմանշային շարքից բխում է, որ *քամել*-ը ձեռագիր բառարաններում ձեռք է բերել նոր նրբիմաստ՝ «հյուծել, հալումաշ անել», որն էլ հենց արդի խոսակցականում փոխաբերական իմաստով գործածվող նույն «սպառվել, վերջանալ, հատնել»-ն է, որքանով նույնն է թե «մեկի կարողությունը, հնարավորությունը, ունեցածը մինչև վերջ կորզել» կամ «սաստիկ ցավ, վիշտ պատճառել» (ԱՀԲԲ, 1550–1551, ԺՀԼԲԲ, 4, 704–705):

Մեծամիտ-անձնագով-ամբարիսուաձ-ամբարտաւան-գոռ-գոռոգ-յոխորտ (յախորտ)-պարծուկ-հպարտ-վէս-կոկոզ(ուշ)-վզան(ուշ)-շքամ-պանծամ-քրքուխմ (403):

Այտուցեալ. փքացեալ. ամբարշտեալ. բողբջացեալ. կիսագոռոգ. հպարտ. ամբարտաւան. անձնահաճ. սնապարծ. սնափառ. ստափառ. ամբարիսուաճ. ըմբահկել. ընդվզել. խրոխտալ. խանչալ. խանծալ. պանծալ. փռնկալ. կոկոզանալ. կոտզանալ*. բարձրավզիլ. ինքնահաճ և վէս:

Մեծամիտ. գոռոգ, հպարտ, սնապարծ, ամբարտավան, անձնապաստան, անձնակարծ, ինքնակարծ, ինքնահաւան, բարձրամիտ, գոռոգամիտ, բարձրահոն, սնափառ, սնապարծիկ, պարծենկոտ, անձնագով, ինքնագով, անձնապարծ, (հնց.) պարծուկ... կոկոզ, կոկոզավիզ, բարձրավիզ... ամբարիսուաճ, հպարտամիտ... (448):

Ներկայացված եռաշարքն արդեն առանձնանում է նրանով, որ ձեռագիր բառարանների հոմանշային շարքի հենաբառը բացակայում է մյուս երկու շարքերում: *Այտուցեալ*-ը ձևաիմաստային առումով *ուռուցեալ*-ի նմանակումն է (ՆՀԲ, 2, 554): Ե՛վ *այտուցեալ*-ը, և՛ *փքացեալ*-ը արձանագրված են Բառ. երեմ.-ում՝

³⁰ Ռ. Ղազարյանը նշում է, որ *հաշել-ը* «յաճախ գործածուում է մաշել բայի հետ՝ Հաշել (ու) Մաշել, նոյն նշ.» (Գրաբարի բառարան, հ. Բ, էջ 40):

*Կոտոզանալ-ու մասին տե՛ս Հովհաննիսյան Ն., Նորակազմ բառեր..., էջ 179–180:

«ուռուցեալ, կամ փքացեալ, կամ հպարտացեալ» (Բառ. երեմ. 17, 328): Կարելի է ենթադրել, որ այսօր էլ խոսակցական լեզվում օգտագործվող **ուռած-փքված** արտահայտության համար աղբյուր կարող են ծառայած լինել քննվող բառարանները: Արդի բացատրական բառարանները «գոռոզանալ, ամբարտավանանալ» փոխաբերական իմաստով ունեն ն' փքվելը, ն' ուռչելը, ն' ուռած-փքվածը (ԱՀԲԲ, 1496-1497, 1544, ԺՀԼԲԲ, 4, 605-606, 693):

Մերօրյա ժողովրդախոսակցականում **ուռչել**-ով երբեմն բնորոշվում է նաև «նեղանալը» (տե՛ս ՀԼՀԲ, 483, 645, ԱՀԲԲ, 1497, ԺՀԼԲԲ, 4, 606), իսկ նեղացած լինելը խոռվել և ինչ-որ տեղ անհաշտ լինելն է (ՀԼՀԲ, ն.տ.): Եվ եթե **անհաշտ**-ը նաև **ամբարիշտ**-ն է, ինչպես «խոսակցական» նշումով առանձնացնում են ՀԼՀԲ-ն (53), ԱՀԲԲ-ն (30), ՀԼԲԲ-ն (1, 50), և այն բնորոշ է դիտվում Արարատյան բարբառին³¹, ապա միանգամայն ընդունելի կարող է համարվել **ամբարիշտ**-ի՝ նաև գոռոզ լինելը: Այսինքն՝ ուռած-փքված-ը գոռոզ է, ամբարիշտ (-անհաշտ), վերջինս էլ, բնականաբար որոշ վերապահությամբ, **անհնազանդ** և **ըմբոստ** կարող է լինել: Այնպես որ ձեռագիր բառարանների հոմանշային շարքի կազմության սկզբունքով, իմաստային հավանական նրբերանգ-տարբերակներով հոմանշային շարքում ընդունելի է **ամբարշտեալ-ի** և **ըմբահկեղ**-ու առկայությունը:

Առանձնանում է և **բողբջացեալ**-ը: ՆՀԲ-ն այն մեկնում է իբրև «Բողբջեղ. ցցուիլ. ծաղկիլ. նմանութեամբ՝ Զուարճանալ» (ՆՀԲ, 1, 504):

Ըստ Հ.Աճառյանի՝ **ցցուիլ**-ը **ցից** արմատի «սաստկականն» է, որը նաև «դուրս տնկուիլ» է նշանակում (ՀԱԲ, 4, 457. հմմտ. **ցցուն** «կարկառուն, ցայտուն» **ցցունք** բառերը): Եվ եթե համադրվի ՆՀԲ-ում «նմանութեամբ» արձանագրված իմաստին, ապա **բողբջացեալ**-ը, նմանեցնելով **ցից լինել-ուն**³², **ցից**-ին³³, փոխաբերորեն կարող է ներկայացվել իբրև «(դուրս) ցցվող, ցից»: Իսկ ամենուր երևալ ցանկացողը, անընդհատ «ցից լինողը» սովորաբար լինում է ինքնահավան, սնապարծ մեկը:

Ի հաստատումն բողբջացեալ→ցից, ցցված(ուռած-փքված իմաստային անցումի՝ հարկ է հավելել նաև **բող**, **բողբոջ**-ի հնդ. **bhel-*, **bhol-* նախաձևերի «հիմնական «ուռչիլ» նշանակությունը»³⁴, որից էլ, ըստ Հ. Աճառյանի, առաջացել են «բարձրանալ» (բլուր) և «գնդաձև (ուռուցիկ) կերպարանք առնել» (բրբ. բուլ) նշանակությունները. պարզորոշ է, որ երկու դեպքում էլ հավանական է վերը նշված փոխաբերական իմաստային զարգացումը:

Բառարաններում արձանագրված չէ **կիսագոռոզ**-ը: **Կես** արմատով համանման կազմություններ (կիսաթուր, կիսավաստակ, կիսագրաստ, կիսահաս)

³¹ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, Ե., 2001, էջ 48:

³² **Ցից լինել** «տնկվել, կանգնել». *Սուքիասյան Ա., Գալստյան Ա.*, նշվ. բառ., էջ 568:

³³ **Ցից** «ցցված, ցցի նման/պես. տնկված, դեպի վեր ձգված՝ խոյացած», ԱՀԲԲ, 1476, ԺՀԼԲԲ, 4, 558:

³⁴ ՀԱԲ, 1, 461-462, 464: *Ջահուկյան Գ.*, նշվ. աշխ. էջ , 115:

առանձնացվել են միջինհայերենյան մատենագրության մեջ³⁵: Այնպես որ նման կառույցները խորթ չեն միջին հայերենին: Իմաստային առումով, թերևս, սին պարծեցող, ուռած-փքված մարդը նշված ժամանակաշրջանում կիսով չափ է գոռոզ (կիսագոռոզ ?) համարվել:

XVII դ. թիվ 532 ձեռագրում հանդիպում է *ստափառ*-ը, որը ՆՀԲ-ն «Ուրիցե սուտ փառք կամ կարծիք» մեկնությամբ հղում է XII դ. (կամ դրանից հետո) ստեղծված մի գրվածքի (ՆՀԲ, 2, 743): *Ստափառ*-ը հունարեն կազմություն է՝ «կեղծ փառքի արժանացած», և հենց այդ իմաստով, «հնց.» նշումով էլ հանդիպում է միայն ԱՀԲԲ-ում (1330), որն էլ հավանաբար վերցրել է Ստ. Մալխասյանցից³⁶, քանի որ որևէ բառարանում չկա³⁷:

Քննական համեմատությամբ և համադրումով որոշակիացվել են (թեև ոչ ամբողջական պատկերով) քննվող ժամանակաշրջանների հոմանշային շարքերի կրած փոփոխությունները բառիմաստի մթագնման, իմաստային նոր նրբերանգ (երբեմն փոխաբերական) ձեռք բերելու և նորակազմ բառերի (հատկապես միջին-հայերենյան հոմանշային շարքում) պատճառով:

ПОПЫТКА СОПОСТАВИТЕЛЬНОГО ИССЛЕДОВАНИЯ СИНОНИМИЧНЫХ РЯДОВ АРМЯНСКОГО ЯЗЫКА

ОГАНЕСЯН Н. Г.

Резюме

Параллельно развитию языка, вследствие изменения значения слов, постоянного вытеснения и проникновения старых и новых слов неизбежно меняются синонимичные ряды. Исторически меняющиеся эти ряды представляют несомненный интерес, поэтому, следуя синонимичным рядам, выделенным Г. Джаукяном из памятников староармянского языка и рукописных словарей синонимов XII-XVII вв., делается попытка выявления особенностей синонимичных рядов старо- и среднеармянского языков, сопоставляя также выделенные ряды из „Словаря синонимов армянского языка” А. Сукиасяна.

На основе сопоставительного исследования определены изменения синонимичных рядов рассматриваемых периодов армянского языка, которые произошли в результате приобретения нового смыслового нюанса (иногда переносного), изменения значения слов и создания новообразований (особенно в среднеармянском языке).

³⁵ *Աճառեան Հ.*, Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մեջ, Կ. Ա., Վենետիկ, 1913, էջ 61-62, *Ղազարյան Բ.*, Միջին հայերենի բառապաշարը, Ե., 1993, էջ 34:

³⁶ ՄՀԲ, 4, 262:

³⁷ ՆՀԲ-ն բառը հոմանիշ է համարում չարափառ-չարադավանին՝ հերետիկոսին (ՆՀԲ, 524, 525, 586):